ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 586-Ա

ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի N 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 35-րդ, 50-րդ կետերով և հիմք ընդունելով Հրաչիկ Նորիկի Ասատրյանի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղի վարչական տարածքում գտնվող 04-055-0006-0015, 04-055-0006-0016, 04-055-0006-00017 և 04-055-0006-0018 կադաստրային ծածկագրերով անշարժ գույքերը միավորել և տալ մեկ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, Հայթաղ գյուղ, Սասունցի Դավթի փողոց, թիվ 5-11 հողամաս հասցե:

2. Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ պետական գրանցման համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 587-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N166-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Թամարա Եղիազարյանի կողմից 2024 թվականի հունիսի 27-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Թամարա Եղիազարյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2024 թվականի II-րդ եռամսյակի համար:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 588-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Խոյ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 89/24 վարչական գործը՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Սիամանթոյի 1 հասցեում Տիգրան Ժյուլվերնի Պետրոսյանին պատկանող հողամասի վրա առանց համապատասխան թույլտվության շարժական տնակ տեղադրելու մասին ***պարզեց, որ***

Տիգրան Ժյուլվերնի Պետրոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Սիամանթոյի 1 հասցեում գտնվող հողամասում, առանց համապատասխան թույլտվության տեղադրել է շարժական տնակ ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 31-ին կազմված արձանագրության, տեղազննության ակտի, տարածքի լուսանկարների հիման վրա 2024 թվականի մայիսի 31-ին«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀօրենքի 30-րդ և 34-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդհոդվածի 2-ին մասի հոդվածի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմը՝ այսուհետ անձնակազմ, հրավիրել և անցկացրել է լսում :

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- Խոյի համայնքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 31-ին կազմված արձանագրությունը և տեղազննության ակտը:

- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

· 2024 թվականի հունիսի 14-ի թիվ 89/24 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

Հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Տիգրան Ժյուլվերնի Պետրոսյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Սիամանթոյի 1 հասցեում գտնվող հողամասում, առանց համապատասխան թույլտվության տեղադրել է շարժական տնակ:

Խոյի 2024 թվականի մայիսի 31-ինհարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 հունիսի 14-ին հրավիրվել է լսում, որի ծանուցումը Տիգրան Ժյուլվերնի Պետրոսյանը ստացել և ներկայացել է վարչական վարույթի լսումներին :

Տիգրան Ժյուլվերնի Պետրոսյանը/անձնագիր՝ /AT0652598, տրված 03.02.2021թ-ին 057-ի կողմից/ վարչական վարույթի լսումների ժամանակ հայտարարեց, որ տեղեկացված չի եղել, որ շարժական տնակ տեղադրելու համար անհրաժեշտ է համապատասխան թոյլտվություն, ուստի տեղեկանալուց հետո պատրաստակամություն է հայտնել կատարել համապատասխան վճարումներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի անկեղծ զղջումը, իրավախախտման հետևանքները կանխելը, ինչպես նաևհիմք ընդունելով Խոյի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից կատարված տարածքի ուսումնասիրության հիման վրա կազմված տեղազննության ակտը՝ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում

կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդմասիհամաձայն՝ Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ և 154-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Տիգրան Ժյուլվերնի Պետրոսյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 589-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Խոյ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 84/24 վարչական գործը՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղում սեփականության իրավունքով Համլետ Ալեքսանի Բաղդասարյանին, Ալլա Համլետի Բաղդասարյանին, Գարիկ Համլետի Բաղդասարյանին, Նոյեմզար Լևոնի Բաղդասրանին պատկանող 04-055-0163-0015 ծածկագրի տակ գտնվող հողամասի վրա առանց համապատասխան թույլտվության շինարարական աշխատանքներ կատարելու մասին, ***պարզեց, որ***

Համլետ Ալեքսանի Բաղդասարյանը, Ալլա Համլետի Բաղդասարյանը,Գարիկ Համլետի Բաղդասարյանը,Նոյեմզար Լևոնի Բաղդասրանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղում գտնվող հողամասում, առանց համապատասխան թույլտվության կատարել է շինարարական աշխատանքներ ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 27-ին կազմված արձանագրության, տեղազննության ակտի, տարածքի լուսանկարների հիման վրա 2024 թվականի մայիսի 27-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ և 34-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-ին մասի հոդվածի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմը՝ այսուհետ անձնակազմ, հրավիրել և անցկացրել է լսում :

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- Խոյի համայնքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 27-ին կազմված արձանագրությունը և տեղազննության ակտը:

- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

- 2024 թվականի հունիսի 7-ի թիվ 89/24 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

Հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Համլետ Ալեքսանի Բաղդասարյանը, Ալլա Համլետի Բաղդասարյանը, Գարիկ Համլետի Բաղդասարյանը, Նոյեմզար Լևոնի Բաղդասրանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղում գտնվող հողամասում, առանց համապատասխան թույլտվության կատարել է շինարարական աշխատանքներ:

Խոյի համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 27-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 հունիսի 7-ին հրավիրվել է լսում, որի ծանուցումը Գարիկ Համլետի Բաղդասարյանը ստացել և ներկայացել է վարչական վարույթի լսումներին :

Գարիկ Համլետի Բաղդասարյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտարարեց, որ կապված հողամասի գործառնական նշանակության փոփոխության հետ, տեղեկացնում ենք, որ կադաստրային քարտեզում վերակառուցված ավտոտեխսսպասարկման կետը սխալ է տեղադրված, ուստի կատարվել է նոր չափագրություն, ինչի արդյունքում ճշտվել է կադաստրային կորդինատներ, կադաստրային քարտեզում սխալը ուղղվել է և կատարված շինարարությունը համընկնում է հասարարակական նշանակությանը: Ինչ վերաբերվում է կատարվող շինարարական աշխատանքներին տեղեկացնեմ, որ համայնքապետարանի կողմից զգուշացնելուց հետո շինարարական աշխատանքները դադարեցվել են:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի անկեղծ զղջումը, իրավախախտման հետևանքները կանխելը, ինչպես նաև հիմք ընդունելով Խոյի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից կատարված տարածքի ուսումնասիրության հիման վրա կազմված տեղազննության ակտը՝ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմի կողմից վարչական գործով

ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կանխարգելում ու կասեցնում է ինքնակամ շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝

1. Սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա, ինչպես նաև անհատական բնակելի տներում կամ ստորաբաժանված կամ բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք, շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ վերակառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված արարքները գյուղական բնակավայրերում իրականացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ Հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝

նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ և 154-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համլետ Ալեքսանի Բաղդասարյանի, Ալլա Համլետի Բաղդասարյանի,Գարիկ Համլետի Բաղդասարյանի, Նոյեմզար Լևոնի Բաղդասրանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 590-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Խոյ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 85/24 վարչական գործը՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղում գտնվող սեփականության իրավունքով Նշան Ավագի Առաքելյանին, Մարտին Նշանի Առաքելյանին,Արմեն Մարտինի Առաքելյանին պատկանող՝ 04-052-0013-0009 ծածկագրի տակ գտնվող հողամասի վրա կառուցված հասարակական նշանակության շինությունը շահագործվում է առանց գործառնական նշանակությունը փոխելու մասին ***պարզեց, որ***

Նշան Ավագի Առաքելյանը, Մարտին Նշանի Առաքելյանը, Արմեն Մարտինի Առաքելյանը սեփականության իրավունքով իրենց պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղում գտնվող, հողամասի վրա կառուցված հասարակական նշանակության շինությունը շահագործվում է առանց գործառնական նշանակությունը փոխելու ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 27-ին կազմված արձանագրության, տեղազննության ակտի, տարածքի լուսանկարների հիման վրա 2024 թվականի մայիսի 27-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ և 34-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-ին մասի հոդվածի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմը՝ այսուհետ անձնակազմ, հրավիրել և անցկացրել է լսում :

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- Խոյի համայնքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 27-ին կազմված արձանագրությունը և տեղազննության ակտը:

- Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

- 2024 թվականի հունիսի 07-ի թիվ 85/24 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

Հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Նշան Ավագի Առաքելյանը, Մարտին Նշանի Առաքելյանը, Արմեն Մարտինի Առաքելյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծաղկունք գյուղում գտնվող, հողամասի վրա կառուցված հասարակական նշանակության շինությունը շահագործվում է առանց գործառնական նշանակությունը փոխելու

Խոյի համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 27-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 հունիսի 7-ին հրավիրվել է լսում, Նշան Ավագի Առաքելյանը, Մարտին Նշանի Առաքելյանը, Արմեն Մարտինի Առաքելյանը պատշաճ ծանուցվել են /հիմք՝ ըստ Հայփոստ ՓԲԸ-ի LO122906724AMհետևել բեռնային համարով առաքանու մանրամասների առաքանին հետ է վերադարձվել չպահանջված նշումով/ սակայն չեն ներկայացել վարչական վարույթի լսմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը ՝ ապացուցված կարելի է համարել, որ Նշան Ավագի Առաքելյանը, Մարտին Նշանի Առաքելյանը, Արմեն Մարտինի Առաքելյանը կողմից կատարվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-ին մասով սահմանված իրավախախտում և վերջինս սույն դեպքում հանդիսանում են իրավախախտման սուբյեկտներ:

Արդյունքում Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում լսումներ իրականացնող հանձնաժողովըառաջարկեց Խոյ համայնքի ղեկավարին՝ Նշան Ավագի Առաքելյանին, Մարտին Նշանի Առաքելյանին, Արմեն Մարտինի Առաքելյանին ենթարկել վարչական պատասխանատվության և նշանակել վարչական տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի չափով՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 8-րդ հոդվածի 1-ին մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջների՝ հողամասի թույլատրված օգտագործումը հողամասի օգտագործումն է դրա նպատակային և գործառնական նշանակությամբ, ներառյալ՝ սահմանված իրավունքները և սահմանափակումները: Հողամասի թույլատրված օգտագործումը սահմանվում է նորմատիվ իրավական ակտերի, հողերի օգտագործման սխեմաների, հողաշինարարական այլ փաստաթղթերի, գլխավոր հատակագծերի ու քաղաքաշինական գոտիավորման նախագծերի հիման վրա:

Արդյունքումտեղիէունեցել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ պարբերությունով խախտում, այն է՝ Հողամասերի գործառնական նշանակությունը և հողատեսքերի ինքնակամ փոփոխելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում քաղաքացիների նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով,

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեղականինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ պարբերությունով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 8-րդ և 9-րդ հոդվածներով, 43-րդ հոդվածի 2-րդ մասով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Իրավախախտողներ՝ Նշան Ավագի Առաքելյանի, Մարտին Նշանի Առաքելյանի,Արմեն Մարտինի Առաքելյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով՝ 50.000 / հիսուն հազար/ ՀՀ դրամ:

2.Վարչական իրավախախտումների վերաբերյալ տուգանքը պետք է վճարվի ֆինանսների նախարարության **900325188150** հաշվեհամարին՝ ստացող ՀՀ Արմավիրի մարզ Խոյ համայնք:

3. Իրավախախտողներ՝ Նշան Ավագի Առաքելյանին, Մարտին Նշանի Առաքելյանին, Արմեն Մարտինի Առաքելյանին տալ պարտադիր ցուցում՝ երկամսյա ժամկետում իրականացնել հողամասի գործառնական նշանակության փոփոխմանն ուղղված աշխատանքներ:

4. Սույն որոշումը կարող է դատական կարգով բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ, 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից կամ սույն որոշմամբ ուղղակիորեն շոշափվող անձանց վերաբերյալ տեղեկությունները հայտնի չլինելու դեպքում հրապարակման պահից՝ Համայնքապետարանի և Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 591-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Խոյ համայնքի ղեկավարը, քննության առնելով թիվ 86/24 վարչական գործը՝ ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գտնվող սեփականության իրավունքով Ստյոպա Վարդգեսի Մելիքսեթյանին՝ պատկանող 04-053-0024-0017 ծածկագրի տակ գտնվող հողամասի վրա հասրակական նշանակության շինությունը շահագործվում է առանց գործառնական նշանակությունը փոխելու մասին,պարզեց, որ

Ստյոպա Վարդգեսի Մելիքսեթյանը սեփականության իրավունքով իրեն պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ծիածան գյուղում գտնվող հողամասի վրա հասրակական նշանակության շինությունը շահագործվում է առանց գործառնական նշանակությունը փոխելու ինչի կապակցությամբ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 27-ին կազմված արձանագրության, տեղազննության ակտի, տարածքի լուսանկարների հիման վրա 2024 թվականի մայիսի 27-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ և 34-րդ հոդվածների հիմքով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-ին մասի հոդվածի պահանջների խախտման փաստով հարուցվել է վարչական վարույթ:

Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմը՝ այսուհետ անձնակազմ, հրավիրել և անցկացրել է լսում :

Վարչական ակտն ընդունելու համար հիմք հանդիսացող փաստերը.

- Խոյի համայնքապետարանի աշխատակազմի վարչական իրավախախտումների վերաբերյալ հանձնաժողովի կողմից 2024 թվականի մայիսի 27-ին կազմված արձանագրությունը և տեղազննության ակտը:

· Տարածքի լուսանկարահանման փաստաթղթերը:

· 2024 թվականի մայիսի 27-ի թիվ 86/24 վարչական գործով լսումներ անցկացնելու վերաբերյալ արձանագրությունը:

Հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում, բացահայտելով գործի բոլոր հանգամանքները և հիմք ընդունելով վերոհիշյալ փաստերը, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

Ստյոպա Վարդգեսի Մելիքսեթյանին՝ պատկանող 04-053-0024-0017 ծածկագրի տակ գտնվող հողամասի վրա հասարակական նշանակության շինությունը շահագործվում է առանց գործառնական նշանակությունը փոխելու:

Խոյի համայնքապետարանում 2024 թվականի մայիսի 27-ին հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2024 հունիսի 7-ին հրավիրվել է լսում, որի ծանուցումը Ստյոպա Վարդգեսի Մելիքսեթյանին ստացել և ներկայացել է վարչական վարույթի լսումներին :

Ստյոպա Վարդգեսի Մելիքսեթյանը վարչական վարույթի լսումների ժամանակ հայտարարեց, որ 2012 թվականին կառուցել է խանութ, բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի վրա, որը շահագործվում է առանց հողամասի գործառնական նշանակության փոփոխության: Խանութի գործառնական նշանակության փոփոխության համար անհրաժեշտ փաստաթղթերը (չափագրություն) ընթացքի մեջ են և պատրաստ լինելուն պես կներկայացնեմ Խոյի համայնքապետարան օրինականացնելու խնդրանքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքները, որպես մեղմացնող հանգամանք պատասխանողի անկեղծ զղջումը, իրավախախտման հետևանքները կանխելը, ինչպես նաև հիմք ընդունելով Խոյի համայնքապետարանի համապատասխան աշխատակիցների կողմից կատարված տարածքի ուսումնասիրության հիման վրա կազմված տեղազննության ակտը՝ Խոյի համայնքապետարանի վարչական իրավախախտման դեպքերով հարուցված վարչական վարույթի շրջանակներում գործերի ուսումնասիրման, նախապատրաստման և հաշվառման աշխատանքների իրականացման անձնակազմի կողմից վարչական գործով ներկայացված բոլոր նյութերը նախապատրաստվել, ուսումնասիրվել են և ներկայացվել են համայնքի ղեկավարին:

Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի՝ համայնքի ղեկավարը, օրենքով նախատեսված դեպքերում և կարգով անձանց ենթարկում է վարչական պատասխանատվության:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ և 5–րդ կետերի՝ համայնքի ղեկավարը օրենքով սահմանված կարգով

վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ: Օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տույժ նշանակելիս հաշվի են առնվում կատարված իրավախախտման բնույթը, խախտողի անձը, նրա մեղքի աստիճանը, գույքային դրությունը, պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար կարող է կիրառվել նախազգուշացումը: Նույն օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ նախազգուշացումը որպես վարչական տույժի միջոց արվում է գրավոր: Օրենսդրությամբ նախատեսված դեպքերում նախազգուշացումը արձանագրվում է այլ սահմանված եղանակով:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կարող են նախատեսվել վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող նաև այլ հանգամանքներ: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործը լուծող մարմինը (պաշտոնատար անձը) կարող է մեղմացուցիչ համարել նաև այնպիսի հանգամանքներ, որոնք նշված չեն օրենսդրության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում՝

1) մեղավորի անկեղծ զղջումը.

2) իրավախախտման վնասակար հետևանքները մեղավորի կողմից կանխելը, պատճառած վնասը կամավոր հատուցելը կամ վերացնելը.

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կատարված իրավախախտման բնույթը և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 23-րդ, 25-րդ, 32-րդ, 33-րդ և 154-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 26-րդ կետով, 43–րդ հոդվածի 1–ին մասի 4–րդ և 5–րդ կետերով և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստյոպա Վարդգեսի Մելիքսեթյանի նկատմամբ նշանակել վարչական տույժ՝ նախազգուշացման ձևով:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածներով նախատեսված կարգով՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կողմերին իրազեկելուն հաջորդող օրվանից կամ համայնքապետարանի տեղեկագրերում հրատարակելու միջոցով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 592-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N166-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Թամարիկ Գասպարյանի կողմից 2024 թվականի հունիսի 27-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հայթաղ գյուղում գործող անհատ ձեռնարկատեր Թամարիկ Գասպարյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ 2024 թվականի I-ին և II-րդ եռամսյակների համար:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 593-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ

ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 30-րդ հոդվածներով ինչպես նաև 38-րդ և 39-րդ հոդվածի երկրորդ մասով , Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ և 48-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631-Ն որոշմամբ, քննարկելով Հայաստանի Հանրապետության Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի Ն. Մաթևոսյան պող. 13 տուն հասցեի բնակիչ՝ Սոֆիկ Աբիսողոմի Մաթևոսյանի 2024 թվականի հունիսի 20-ի դիմումը, Խոյ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 27-ի թիվ 09 նիստի արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Թույլտվություն տալ Սոֆիկ Աբիսողոմի Մաթևոսյանին՝ ծնված 1977 թվականի փետրվարի 03-ին, /անձնագիր՝ AR0204198 տրված՝ 2017թվականի փետրվարի 23-ին 057-ի կողմից/, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով նաև աղջկան՝ Անի Արմենի Վարդանյանին /ծնված՝ 2008 թվականի դեկտեմբերի 02-ին, անձնագիր՝ AL0615503 տրված՝ 2024 թվականի փետրվարի 07-ին, 057-ի կողմից/ պատկանող ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաք, Չարենցի փողոց 5 շենք, 76 հասցեում, վկայական N 19062024-04-0060, 04-002-0534-0002-005-086, կադաստրային ծածկագրի տակ գտնվող՝ 58,6 քմ մակերեսով դեղատունն օտարելու:

2. Հսկողություն սահմանել Անի Արմենի Վարդանյանի մոր՝ Սոֆիկ Աբիսողոմի Մաթևոսյանի գործունեության նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 594-Ա

ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ 43,1ՔՄ ԾԱԾԿԱԾ ՄՈՒՏՔԻ, 16,7ՔՄ ԱՎՏՈՏՆԱԿԻ, 29,9ՔՄ ՄԱՌԱՆԻ ԵՎ 16,8ՔՄ ԹՈՆՐԱՏՈՒՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղականինքնակառավարմանմասին» ՀայաստանիՀանրապետությանօրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀայաստանիՀանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի թիվ 88 որոշմամբ հաստատված կարգի.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Աղավնատուն գյուղի վարչական սահմաններում գտնվող 04-006-0030-0010 կադաստրային ծածկագրով 0,148հա մակերեսով բնակավայրերի հասարակական նշանակության հողամասի վրա գտնվող 04-006-0030-0010-002 ծածկագրի 43,1 քմ մակերեսով ծածկած մուտք շինության գործառնական նշանակությունը, փոխել ծածկի, 04-006-0030-0010-003 ծածկագրի 16,7 քմ մակերեսով ավտոտնակ շինության գործառնական նշանակությունը, փոխել գրասենյակի, 04-006-0030-0010-004 ծածկագրի 29,9 քմ մակերեսով մառան շինության գործառնական նշանակությունը, փոխել գրասենյակի և 04-006-0030-0010-005 ծածկագրի 16,8 քմ մակերեսով թոնրատուն շինության գործառնական նշանակությունը, փոխել պահեստի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2024 թվականի N 595-Ա

ԿԱՐԱՊԵՏ ԼԵՎՈՆԻ ԼԵՎՈՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ (ՕԳՆԱԿԱՆ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N 631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Խոյ համայնքի Մրգաստան գյուղի 2 փողոց 19 տուն հասցեի բնակիչ՝ Արտակ Կարապետի Լևոնյանի 2024 թվականի հունիսի 24-ի դիմումը, ՀՀ Արմավիրի մարզի Խոյ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 27-ի թիվ 09 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի բնակիչ՝ Կարապետ Լևոնի Լևոնյանի /ծնված 1965 թվականի հուլիսի 13-ին, անձնագիր՝ AS 0228324 տրված՝ 2018 թվականի հունիսի 14-ին 057-ի կողմից / նկատմամբ սահմանել պատրոնաժ՝ պատրոն նշանակելով նրա որդուն՝ Արտակ Կարապետի Լևոնյանին / ծնված՝ 1986 թվականի մարտի 01-ին, անձնագիր՝ AS 0298646 տրված՝ 2018 թվականի հուլիսի 23-ին, 057-ի կողմից/:

2. Արտակ Կարապետի Լևոնյանին վերապահել ի շահ Կարապետ Լևոնի Լևոնյանի, առանց հատուկ լիազորագրի կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրա իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

3. Հսկողություն սահմանել Կարապետ Լևոնի Լևոնյանի նկատմամբ պատրոն նշանակված՝ Արտակ Կարապետի Լևոնյանի գործունեության նկատմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա.ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 27
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2024 թվականի N 596-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 14-ի N166-Ն որոշումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի գործադիր մարմնի ղեկավար՝ Արմեն Աբգարյանի կողմից 2024 թվականի հունիսի 28-ին ներկայացրած հայտը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղում գործող «ԷՅ ԸՆԴ ՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին տալ տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ 2024 թվականի համար:

2.Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքերի վճարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 28
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ.Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
060888999, khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2024 թվականի N 597-Ա

ԳԱՅԱՆԵ ԱՄԱՍՅԱՅԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ (ՕԳՆԱԿԱՆ) ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 02-ի N631-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Խոյ համայնքի Մրգաստան գյուղի 4-րդ փողոց 24 տուն հասցեի բնակիչ՝ Սուրեն Վրեժի Մարտիրոսյանի 2024 թվականի հունիսի 20-ի դիմումը, Խոյ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի հունիսի 27-ի թիվ 09 նիստի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Մրգաստան գյուղի բնակիչ՝ Գայանե Ամասյայի Մարտիրոսյանի /ծնված 1956 թվականի օգոստոսի 05-ին, անձնագիր՝ AS0669247 տրված՝ 2019 թվականի հունիսի 26-ին 057-ի կողմից/ նկատմամբ սահմանել պատրոնաժ՝ պատրոն նշանակելով նրա որդուն՝ Սուրեն Վրեժի Մարտիրոսյանին /ծնված՝ 1983 թվականի սեպտեմբերի 22-ին, նույնականացման քարտ՝ 010529444 տրված՝ 2019 թվականի օգոստոսի 22-ին, 057-ի կողմից/:

2. Սուրեն Վրեժի Մարտիրոսյանին վերապահել ի շահ Գայանե Ամասյայի Մարտիրոսյանի, առանց հատուկ լիազորագրի կնքել անհրաժեշտ գործարքներ, հանդես գալ նրա իրավունքների ու շահերի պաշտպանությամբ՝ ցանկացած ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

3. Հսկողություն սահմանել Գայանե Ամասյայի Մարտիրոսյանի նկատմամբ պատրոն նշանակված՝ Սուրեն Վրեժի Մարտիրոսյանի գործունեության նկատմամբ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024թ. հունիսի 28
Խոյ համայնք, գ. Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2024 թվականի N 598-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2024CKWUSL, ծածկագիրը և հիմք ընդունելով Լևոն Գևուշի Մինասյանի դիմումը՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Հ. Շիրազի փողոց 4 բնակելի տուն հասցեում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացի Լևոն Գևուշի Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի Հ. Շիրազի փողոց 4 բնակելի տուն հասցեում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 1462991 / 04-087-0021-0034 կադաստրային ծածկագրով 0,127 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 128,4 քմ արտաքին մակերեսով ինքնակամ շինությունները, / 6,6 քմ մակերեսով բնակելի տուն նկուղ, կառուցված՝ 2013թ., 11,3 քմ մակերեսով

բնակելի տուն, կառուցված՝ 2019թ./, իսկ 27,6 քմ մակերեսով ավտոտնակը, կառուցված՝ 2010թ./, 0,4 քմ մակերեսով պարիսպը, կառուցված՝ 2010թ./, 4,6 քմ մակերեսով թռչնանոցը, կառուցված՝ 2022թ./, 8,6 քմ մակերեսով թռչնանոցը, կառուցված՝ 2022թ./, 4,4 քմ մակերեսով թռչնանոցը, կառուցված՝ 2022թ./, 61,9 քմ մակերեսով անասնաշենքը, կառուցված՝ 2023թ./ և 3 քմ մակերեսով զուգարանը, կառուցված՝ 2024թ./ թողնել ինքնակամ:

2. Ինքնակամ կառույցների օրիկանացման համար սահմանված վճարը կազմում է 21642 /քսանմեկ հազար վեց հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Լևոն Գևուշի Մինասյանը /անձնագիր՝ AU0546655, տրված 14.12.2021թ, 057-ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին՝ 21642 /քսանմեկ հազար վեց հարյուր քառասուներկու/ ՀՀ դրամ, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստան Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5. Արմավիրի մարզի Խոյ համայնքի Գեղակերտ գյուղի 04-087-0021-0034 կադաստրային ծածկագրով հողամասին տալ նոր հասցե՝ Արմավիրի մարզ Խոյ համայնք գյուղ Գեղակերտ, Հ. Շիրազի փողոց թիվ 4 բնակելի տուն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024 թվականի հունիսի 28
Խոյ համայնք գ.Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք
գ.Գեղակերտ, Մաշտոցի 30, 060-88-89-99, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2024 թվականի N 599-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով, հաշվի առնելով կադաստրի կոմիտեում հաշվառված, չափագրման տվյալների մուտքագրման 2024QB9HNL, ծածկագիրը և հիմք ընդունելով Արաիկ Աշոտի Սողոմոնյանի դիմումը՝ իրեն պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Վ. Տերյան փողոց 30/1 հողամաս հասցեում կառուցված ինքնակամ շինությունները օրինականացնելու համար, կառույցը չի հակասում քաղաքաշինական նորմերը և չի առաջացնում սերվիտուտ, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, համապատասխանում է համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերի նախատեսված գոտիներում գտնվող կառույցների՝ ծրագրի պայմաններին.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Օրինականացնել քաղաքացի Արաիկ Աշոտի Սողոմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Վ. Տերյան փողոց 30/1 հողամաս հասցեում գտնվող /իրավունքի պետական գրանցման վկայականի N 03082017-04-0003 / 04-060-0014-0002 կադաստրային ծածկագրով 0,128 հա փաստացի օգտագործվող հողամասի վրա կառուցված ընդամենը 357,4 քմ արտաքին մակերեսով ինքնակամ շինությունները, / 196,9 քմ մակերեսով ավտոտեխսպասարկման կետ, կառուցված՝

2018թ., 157 քմ մակերեսով պահեստ, կառուցված՝ 2018թ./, 3,5 քմ մակերեսով պարիսպ, կառուցված՝ 2018թ./:

2. Ինքնակամ կառույցների օրիկանացման համար սահմանված վճարը կազմում է 864194 /ութ հարյուր վաթսունչորս հազար հարյուր իննսունչորս /ՀՀ դրամ:

3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը Արաիկ Աշոտի Սողոմոնյանը /անձնագիր՝ ID 012598868, տրված 24.12.2019թ., 057-ի կողմից/ պետք է 60-օրյա ժամկետում վճարի Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական եկամուտների 900325188150 հաշվեհամարին՝ 864194 /ութ հարյուր վաթսունչորս հազար հարյուր իննսունչորս / ՀՀ դրամ, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:

4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստան Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՄԵԽԱԿՅԱՆ**

2024 թվականի հունիսի 28
Խոյ համայնք գ.Գեղակերտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Արմավիրի մարզ, Խոյ համայնք, գ. Գեղակերտ, Մ.Մաշտոցի 30
Հեռ.՝ 060888999, էլ. հասցե khoy.community@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2024 թվականի N 600-Ա

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավորվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հուլիսի 23-ի թիվ 828 որոշմամբ հաստատված կարգը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Հովտամեջ գյուղի Վ. Տերյան փողոց 30/1 հողամաս հասցեում գտնվող 04-060-0014-0002 կադաստրային ծածկագրով 0.128 հա մակերեսով բնակավայրերի, բնակելի կառուցապատման նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս կատեգորիայի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄԵԽԱԿՅԱՆ

2024 թվականի հունիսի 28
Խոյ համայնք գ.Գեղակերտ